ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**03.09.2020 թվականին կնքված N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/59-1**
**ապրանքի մատակարարման պայմանագրի**

ք. Երևան «06» 10 2020թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ը ի դեմս տնօրենի ժ/պ Գ. Ավետիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Արսթարգելաքսի» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 03.09.2020թ-ին կնքված N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/59-1 ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը, և հաշվի առնելով որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի Հավելված N1-ի «Տեխնիկական բնութաիր-գնման ժամանակացույց»-ով ներկայացված աղյուսակի 12-րդ և 45-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մասով «Ժամկետը» սյունակում «սակայն ոչ ուշ քան ս.թ. հոկտեմբերի 15-ը» բառերը փոխարինել «սակայն ոչ ուշ քան ս.թ. նոյեմբերի 14-ը» բառերով:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78
ՀՎՀՀ՝ 00000911
Բանկ՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ՝ 163007096304
Տնօրենի ժ/պ՝ Գ. Ավետիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Արսթարգելաքսի» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ֆրունզե /10/ 1 /14
ՀՎՀՀ՝ 00091325
Բանկ՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ՝ 163018284139
Տնօրեն՝ Ա. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ